

իրենց, միևնույն՝ բիւզանդական նոր հերետիկոսութիւնը: Ինչ ընելին շփոթած էին:

Սուրեն պարտաւոր եալ համառօտ պատմեց իր արկածքը, եւ երբ ամենքը քաշուեցան, զնացին, իջաւ վտակը, լուացուեցաւ, եւ քանի մը ժամ քունէ վերջ՝ կաղդուրեալ արթնցաւ: Երբ կը պատրաստուէր ելնել շրջան մ'ընելու գիւղին մէջ, ահա եպիսկոպոսը եւ ծերերու խումբը եկան դարձեալ, եւ այս անգամ կողովներով արմաւ, փւիստակ, չամիչ եւ ուրիշ այսպիսի չոր պտուղներու ընծաներով իրեն ներկայացան, խնդրելով, որ զիրենք չթողու, այլ մնա իրենց բով եւ հանգուցեալ իշխանին տեղ տիրէ այդ լեռներուն, խոստանալով հաւատարմութեամբ ծառայել իրեն:

Այսպիսի առաջարկութիւն մը Սուրենի ծիծաղ եւ բարկութիւն բերաւ միանգամայն, բայց ինքզինք սանձել խոհեմութիւն համակելով պատասխանեց թէ՝ «Այդպիսի խնդիր մը մերժել իւր կողմանէ այնչափ տմարդութիւն էր՝ ինչչափ այդ խնդիրն ընողներուն սրտի ազնուութեան յայտնութիւն էր, որ իր փոքրիկ մէկ օգնութիւնը այդպիսի մեծ պատուով կ'ուզէին վարձատրել: Բայց խորհրդածելով թէ ինք ընտանեաց տէր էր, եւ իւրայինք տարիներով կը սպասէին աչքերնին ճամվան, ո՞ր հայրը իրենցմէ կրնար ներել իւր անտարբերութեան, եթէ մոռնար ընտանիքը»:

Այս խօսքերը թէեւ քաղցր կերպով զրուցուած՝ դարձեալ մերժումն էին, եւ ծերերը տխրեցան. իսկ եպիսկոպոսը, որ հայր չէր, սկսաւ սուրբ գրոց յարմար կամ անյարմար վկայութեամբք քարոզ մը տալ իրեն, ուր Յուդա Մակաբէ՝ Փրկիչ զինք կուգեր ընել, եւ իւր վերջին փաստը անջրելն եւ անհակառակելին մէջ բերաւ՝ երբ ըսաւ,

— Զիմա դու, ո՛վ քաջդ եւ ազնուական, երբ կ'ամա-ականայ այս մեր լեռները կենաս, մեր իշխանուհին տեսնես որ քաջ է այր մարդու պէս, որ շուշան իւր սպիտակ մորթով եւ վարդ իւր շրթանց կարմրութեամբ, որու մեծ եւ գեղեցիկ աչքերը եղնիկի են, որու վիզը ջայլեման եւ հասակն արմաւենեաց, դու կը մոռնաս քու մեռած կամ թողած կամ գբեզ մոռացած կիկոյ ու զաւկներդ: Աստուած ձեզի նոր-նոր ընծիւղներ կ'ուտայ, որ իւր տան վայելչութիւնը շքեղանայ, այս բարձունք կը զարդարուի փառաւոր, քան զսիոնի լեռը, կը ծաղկին, քան զգիթենեաց պարտեզը:

Մարտայիթ եպիսկոպոսին ճառը, որ Սուրենի ճաշակին համար ախորժելի եւ անախորժ կողմերն ունէր եւ մանաւանդ հետաքրքրական էր, իր սովորական